

ՀՀ մարզպետի մուտ կայացած խորհրդակցության

06.07. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյանը -մարզպետի տեղակալ
- Ա.Մխիթարյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղար
- Վ.Խաչատրյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Վ.Ղարսայանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Թումանյանը, Է.Հախվերդյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Կ.Աղամյանը, Ն.Համբարձումյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
- Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական
- Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական
- Ռ.Մարգարյանը -փորձագետ

Օրակարգում՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Փոխմարզպետ՝ Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

Հանձնարարվեց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Մարզպետարան մուտք եղած քաղաքացիների դիմումներին պատասխանելիս անհրաժեշտ ուշադրություն դարձնել, որպեսզի դրանք լինեն օբյեկտիվ, լրիվ, բազմակողմանի, հնարավորինս անաչառ և բոլոր հարցերի պատասխաններին սահմանված ժամկետներում լուծում տրված:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին և մարզպետարանի ֆինանսական ու սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

Ամենշաբաթյա վերլուծություն իրականացնել և վերահսկել մարզի համայնքների սեփական եկամուտների կատարման ընթացքը ու ներկայացնել տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին և մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին՝

Երկշաբաթյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն և առաջարկություններ ընդերքօգտագործման խնդիրների և դրանց լուծման վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի Ժ/պ Վ.Ղարսայանին, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին և զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին՝

Համատեղ քննարկել և ներկայացնել առաջարկություններ մարզում իրականացվող ծրագրերի ընթացքն ուսումնասիրելու նպատակով կատարվելիք շրջայցերի վերաբերյալ:

**5. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի ժ/պ Վ.Ղարսայանին՝**

Երկշաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն մարզում իրականացվող ոչ սուբվենցիոն շինարարական ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

**6. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժ/պ Լ.Վարդանյանին՝**

Համատեղ աշխատանքներ իրականացնել հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի մարզային բաժնի հետ և ներկայացնել տեղեկատվություն Սպիտակի թոչնաբուժական ֆաբրիկայում կորոնավիրուսի հայտնաբերման և կանխարգելման վերաբերյալ:  
/ժամկետ 1օր/

**7. ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ա.Սահակյանին՝**

Համապատասխան ստորաբաժանումներից պահանջել տեղեկատվություն Դսեղի ոռոգման համակարգի վերաբերյալ և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել մարզպետին՝ ընթացք տալու նպատակով:

06/07/20

X 

ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ԴՈՒԿԱՍՅԱՆ